

հազար հինգ հարիւր քառասուն եւ չորք այր²: **Ինն այր ի նոցանէ ի մեծ պատուաւորացն էր**, վասն որոյ եւ կարի յոյժ ի խոր խոցեցաւ Մուշկան Նիսալաւորտ: Մանաւանդ իբրեւ ետես զանհնարին հարուածսն **Երեքպատիկ զիրոյ գնդին քան զՀայոցն**, բեկաւ անկաւ զաւրութին ուժոյն իւրոյ, եւ ոչ հանդարտէր կալ ի վերայ խորհրդոց մտացն...»:

Ղազար Փարպեցի. «[գլ. Բ.լէ, էջ 69³, նախ. 8-13, էջ 2265-2266] ... առաքէր երանելի սպարապետն Հայոց Վարդան միաբանութեամբ աւագանւոյն... սեպուի մի յազգէն Ամատունեաց, որում անուն էր **Առանծար**, իբրեւ երեք հարիւր հեծելով՝ **երթալ լրտեսել զբազմութին զաւրացն Պարսից**... Եւ երթեալ Առանծար եւ գունդն, որ ընդ նմա՝ ... զհզար վերջապահ թելով միով անկեալ՝ **զբազումս հանէին ընդ սուր, եւ զայլս փախստականս արարեալ արկանէին** ի զաւրն Պարսից. եւ ինքեանք դարձեալ **ողջանդամք հասանէին ուրախութեամբ ի գունդն Հայոց**... Պատմէին եւ վասն զաւրագլխացն, թէ Մուշկանն Նիսալաւորտ եւ Դողվճն [ծեռ.՝ Դողովճն] են. տային գիտել եւ զայն եւս սթափութեամբ **հասանել ի միջոյ կողման աշխարհիս**: Զոր լուեալ երանելոյ սպարապետին Հայոց եւ որ ընդ նմայն էին՝ եւս առաւել ճեպէին երթալ ընդդէմ նոցա. նախ՝ վասն վաղվաղակի պատահելոյ նոցա ժամու մարտիրոսութեան... եւ երկրորդ՝ ասէին, **թերեւս անդէն ի տեղուցն ի Հեր եւ ի Զարեանդ գաւառին վճարին ելք գործոյն պատերազմին**, եւ ոչ ոք լինէր արգել զաւրուն Պարսից հասանել յաշխարհն Հայոց սպանութեամբ եւ գերելով յարծակել եւ վնասել: Եւ սոցա թէպէտ եւ ածեալ զայսպիսի ինչ գմտաւ կամէին փութալ՝ սակայն եւս առաւել ստիպով եկեալ հասանէին գունդն Պարսից **ի գաւառն Արտազ, հուպ ի գեաւոն, որ կոչի Աւարայր, ի շրջափակ տեղի Տղմուտ դաշտին**, զոր **ընտրեաց յաղագս երկիւղի զաւրացն Հայոց**. ամուր ապաստանի անձանց համարէին պատշաճ, եւ ի միջի նորա ածեալ դակիշ բանակէին:

[գլ. Բ.լթ, էջ 71-73, նախ. 1-12, էջ 2268-2269] Վասն զի **մերձեալ էր այնուհետեւ ժամ ելից արեգական**, եւ գունդն Պարսից **ճակատել ի պատերազմն պատրաստէին եւ վառէին**, եւ սուրբն Վարդան՝ տէրն Մամիկոնէից, բաժանեալ զիր գունդն յերիս առաջս՝ միջոցի գնդին կարգէր գլխաւոր զտէրն Արծրունեաց եւ զմարդպետն Միհրշապուոհ՝ հանդերձ իշխանան Արշարունեաց Արշարաւ եւ երանելի արամբն Արտակաւ՝ իշխանան Մոկաց, եւ այլ աւագ նախարարաւքն. եւ կողմանն աջոյ կարգէր աւագ՝ զերա-

² Այսպիսով, Աւարայրի ճակատամարտի վճռորոշ արդիւնքներից մէկն էլ այն էր, որ պարսիկների եւ «ուրացողների» կորուստները գրեթէ **3,5 անգամ** աւելի էին, քան ուխտապահ հայերինը:

³ Ըստ՝ Փարպեցի 1904: Նշում ենք նաեւ «Մատենագիրք Հայոց»-ի հտ. Բ-ի (Անթիլիաս, 2003) բնագրի էջերը եւ նախադասութիւնների համարները: